ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման վայրը՝
- Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 309 սենյակ.
-օրը՝ 14.02. 2022թ,- ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Հայրապետյան, Ա. Մխիթարյան, Վ. Շիրինյան, Լ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

Պարզաբանման վերաբերյալ

Ընդունել ի գիտություն, որ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացվել է պարզաբանման հարցում.

Հարցադրում N 1

1. Համաձայն ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ Հոդված 13-ի «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը»:
Ձեր կողմից հրապարակված՝ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/3 ծածկագրով ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*-ը չի ապահովում օրենքի Հոդված 13-ի պահանջները:
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*-ով ներկայացված նախագծվող օբյեկտների բնութագրերը լիարժեք չեն: Բացակայում են օբյեկտների նկարագրերը, չկան տեղեկություններ դրանց առկա վիճակի և ծավալի վերաբերյալ:
Հետևաբար հնարավոր չէ պատկերացնել կատարվող աշխատանքային ծավալները և ներկայացնել համարժեք գնային առաջարկ:

Գնահատող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանում

Տեղեկացնում ենք, որ ԵՔ-ԳՀԽԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման հայտարարության տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը ամբողջապես համապատասխանում է ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ Հոդված 13-ին: Նշված բակերն ու բակային տարածքները գտնվում են անբարեկարգ վիճակում, նշվել են պահանջվող աշխատանքների բնութագրերը, իսկ առկա վիճակի և աշխատանքների ծավալների համար առաջարկում ենք կատարել այցելություն նշված տարածքներ: Լրացուցիչ պարզաբանումների համար կարող եք դիմել՝ Շենգավիթ վարչական շրջանի Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի պետի տեղակալ Արամ Հայրապետյանին (հեռ. 094989779):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ Председатель комиссии:		Մ. Մանուկյան	М. Манукян
Անդամներ՝ Члены комисии:		Ա. Հայրապետյան	А. Айрапетян
		Ա. Մխիթարյան	А. Мхитарян
		Վ. Շիրինյան	В. Ширинян
		Լ. Խաչատրյան	Л. Хачатрян
Համակարգող՝ Секретарь комисии:		Ի. Եղիազարյան	И. Егиазарян